ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ (ՃՇԳՐՏՈՒՄ)

ՀՀ կառավարության 14.08.2014թ. №883-Ն և №888-Ն որոշումներով սահմանվել է, որ ջրային համակարգերի օգտագործումն ու պահպանումը 2017 թվականի հունվարի 1-ից իրականացվելու է պետական-մասնավոր գործընկերության շրջանակում մեկ կառավարչի կողմից՝ 15 տարի ժամկետով վարձակալությամբ փոխանցելու միջոցով:

Վարձակալի ընտրության գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ կազմված տարբեր պետական մարմինների թվով 12 ներկայացուցիչներից:

Վարձակալության գործընթացի աշխատանքներին աջակցելու նպատակով ներգրավվել է միջազգային խորհրդատվական ընկերություն, որի աջակցությամբ մշակվել են վարձակալի ընտրության մրցութային փաստաթղթերի փաթեթը, այդ թվում՝

- **Վարձակալության պայմանագրի նախագիծը՝ հիմնական կատարողական ցուցանիշներով (*ջրամատակարարման շարունակականություն, ջրի որակ, չհաշվառվող ջուր, բաժանորդների բավարարվածություն*),**
- **ապագա վարձակալ ընկերության լիցենզիայի պայմանները, որում ի սկզբանե ամրագրվել են սակագների ձևավորման և յուրաքանչյուր տարվա ճշգրտման մեխանիզմները:**

Վարձակալության մրցույթում հաղթող ճանաչելու հիմնական պայմաններից է եղել նաև հայտատուների կողմից առաջարկվող սակագների մեծությունները:

ՀՀ կառավարության 27.10.2016թ. №43-24 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել ջրային համակարգերի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու մրցույթի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերությանը, ինչպես նաև Վարձակալության պայմանագրի նախագիծը:

«Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության, նրա կողմից հիմնադրված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարության (ի դեմս ջրային կոմիտեի) միջև 21.11.2016թ. կնքվել է վարձակալության պայմանագիրը, որը մեկնարկել է 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կառավարության կազմակերպած վարձակալության մրցույթի արդյունքում ձևավորվել և սահմանվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման 15 տարվա բազիսային սակագները (ներառյալ ԱԱՀ-ն)



ՀՀ կառավարության կազմակերպած վարձակալության մրցույթի արդյունքում ձևավորվել և սահմանվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման 15 տարվա բազիսային սակագները (ներառյալ ԱԱՀ-ն)



Հաշվի առնելով ՀՀ կառավարության կազմակերպած մրցույթի արդյունքում վարձակալության 15 տարիների համար ձևավորված ծառայությունների բազիսային սակագները և վարձակալության պայմանագրի ընդհանուր պայմանների 9-րդ հոդվածի 9.1(2) կետը, Հանձնաժողովը 09.12.2016թ. №397Ա որոշմամբ հաստատել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմանները՝ վերջինիս №3 հավելվածում նույնությամբ ամրագրելով մրցույթի արդյունքում ձևավորված 15 տարիների բազիսային սակագները և մրցակցային փաթեթում ներառված սակագների ճշգրտման մեխանիզմները:

Համաձայն սակագների ճշգրտման մեխանիզմների՝ վարձակալության պայմանագրի 1-ին տարվա (2017թ.) համար նույնությամբ սահմանվել են մրցույթի արդյունքում ձևավորված սակագները (գումարային մանրածախ սակագինը՝ 180 դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն), իսկ վարձակալության պայմանագրի 2-րդ տարվանից (2018թ.) սկսած սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են պարտադիր ճշգրտման՝ միայն հետևյալ գործոններով պայմանավորված.

- ✓ մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխություն,
- ✓ սղաճ,
- ✓ ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխություն,
- ✓ ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցում:

Այսպիսով, գործող իրավակարգավորումների համաձայն, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների **ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ** բացի վերը նշված գործոններից,

ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ ՉԵՆ ԱԶԴՈՒՄ

Մասնավորապես, բազիսային **սակագների ճշգրտման հաշվարկներում չեն կարող նախատեսվել՝**

- ջրի կորուստների կրճատման ցուցանիշը,
- ընկերության կողմից իրականացված գնումների գործընթացի հետ կապված հարցերը,
- ընկերության կողմից կատարվող ընթացիկ ծախսերը,
- և այլն:

Հաշվի առնելով գործող իրավակարգավորումները և բազիսային սակագնի ճշգրտման գործոնները՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն 08.08.2018թ. հերթական անգամ դիմել է Հանձնաժողով՝ վարձակալության 3-րդ տարվա (2019թ.) համար ծառայությունների մատուցման ճշգրտված սակագները սահմանելու հայտով, որով մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագինն առաջարկվել է՝

205,125 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ)

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից վարձակալության պայմանագրի և իր լիցենզիայի պայմանների դրույթներին խստագույնս հետամուտ լինելու դեպքում Հանձնաժողովը, ըստ էության, գրեթե նույնությամբ պետք է հաստատի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 2019թ. համար ներկայացված ծառայությունների մատուցման սակագները:

Սակայն, Հանձնաժողովը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը և ջրային կոմիտեն, ընկերության հետ ձեռքբերված փոխադարձ համաձայնությամբ, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների (*այդ թվում՝ «Սպառողների աջակցման կենտրոն», «Սպառողների ասոցիացիա», «Բնակարանային-կոմունալ ոլորտի աշխատողների միություն» և «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ներ*) հետ համատեղ իրականացրել են փաստացի մանրածախ ջրամատակարարման ծավալների մոնիթորինգ՝ երկու փուլով՝

- **Երևան քաղաքի սպասարկման տարածքում,**
- **Մարզերի սպասարկման տարածքում:**

Ջրամատակարարման ծավալների մոնիթորինգի գործընթացը



Այցելություններ տեղերում և արձանագրված խախտումներ

Այցելություններ տեղերում և արձանագրված խախտումներ

Ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են.

1. Ջրոյական սպառում ունեցող սպառողների մոտ՝ մոնիթորինգի արդյունքում գրանցված և ընկերության բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ,

2. Ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով՝ 90 օրվա համար (համաձայն գործող օրենսդրության):

Մոնիթորինգի արդյունքներ
(01.10.2018թ.-19.10.2018թ.)

N	Տարածք	Այցերի քանակը (հատ)	Արձանագրված խախտումների քանակը (հատ)	Մոնիթորինգի արդյունքում հաշվարկված լրացուցիչ ծավալ (խմ)
1	Երևանի սպասարկման տարածք	1480	70	725.450
2	Մարզերի սպասարկման տարածք	1200	75	859.280
	ԸՆԴԱՄԵՆԸ	2680	145	1.584.730

Ամփոփելով մոնիթորինգի արդյունքերը՝ 2019 թվականի համար սահմանվող մանրածախ ծառայությունների գումարային սակագինը հաշվարկվել է 202,272դրամ/խմ, որը ձևավորվել է հետևյալ բաղադրիչներից՝

- **Վարձակալության մրցույթի արդյունքում ձևավորված բազիսային սակագին՝ 194,4 դրամ/խմ,**
- **Մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխությամբ պայմանավորված ավելացում՝ 6,001 դրամ/խմ** (127 մլն խմ-ի փոխարեն 120,26 մլն խմ)**,**
- **Սղաճով պայմանավորված ավելացում՝ 3,397 դրամ/խմ** (ըստ ԱՎԾ-ի՝ 102,4%)**,**
- **Ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված նվազեցում՝ 1,061 դրամ/խմ,**
- **Ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցում՝ 0,465 դրամ/խմ:**



Այսպիսով, ընկերության կողմից ներկայացված 205,125 դրամ/խմ սակագնի փոխարեն Հանձնաժողովի աշխատակազմը հաշվարկել է 202,272 դրամ/խմ կամ 2,853 դրամ/խմ-ով պակաս, որը պայմանավորված է հետևյալով՝

- ընկերությունը վերանայման հայտով փաստացի ծավալները ներկայացրել էր 01.07.2017-01.07.2018թթ. ժամանակահատվածի համար, սակայն Հանձնաժողովը լիցենզիայի պայմանների համաձայն հիմք է ընդունել 01.08.2017-01.08.2018թթ. ժամանակահատվածի փաստացի ծավալները, որի արդյունքում ձևավորված լրացուցիչ 1,25 մլն խմ ծավալը սակագինը նվազեցրել է 1,114 դրամ/խմ-ով,
- մոնիթորինգի արդյունքում հաշվարկված լրացուցիչ 1,58 մլն խմ ծավալը սակագինը նվազեցրել է 1,41 դրամ/խմ-ով,
- էլեկտրաէներգիայի միջին կշռութային սակագնի ճշգրտման արդյունքում սակագինը նվազեցվել է 0,243 դրամ/խմ-ով ,
- այլ եկամուտների մեծության ճշգրտման արդյքունքում՝ սակագինը նվազեցրել է 0,086 դրամ/խմ-ով:



194.4+8,525+3,397+(-0.818)+(-0.379)=205.125 դրամ/խմ

194.4+6,001+3,397+(-1.061)+(-0.465)=202.272 դրամ/խմ

~~205.125~~ 202.272

դրամ/խմ

Անվանումներ	*ՀԱՅՏ*	*ՀԾԿՀ*	*Տարբ.*
Բազիսային սակագին	194,4	194,4	0
Մանրածախ ծավալի փոփոխությամբ ճշգրտում	8,525	6,001	-2,524
Սղաճով պայմանավորված ճշգրտում	3,397	3,397	0
Էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ ճշգրտում	-0,818	-1,061	-0,243
Այլ եկամուտներով պայմանավորված ճշգրտում	-0,379	-0,465	-0,086
Մանրածախ գումարային սակագին	**205,125**	**202,272**	**-2,853**

Նպատակ ունենալով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համար սպառողների կողմից վճարվող սակագների մեծությունը պահպանել նույն մակարդակին՝ 180 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ), և հաշվի առնելով, որ գործող սակագների (191,414 դրամ/խմ) և սպառողներին մատուցվող ծառայությունների սակագների տարբերության փոխհատուցումը սուբսիդիայի տեսքով ներառված է 2019թ. պետական բյուջեում, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ քննարկումների արդյունքում, ձեռք է բերել պայմանավորվածություն այլընտրանքային ֆինանսավորման վերաբերյալ: Այդ նպատակով Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև 26.11.2018թ. ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Վարձակալության կողմերի կամարտահայտման փոխըմբռնման հուշագրի համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման 2019 թվականի մանրածախ սակագները 2017 թվականի մակարդակին պահպանելու վերաբերյալ



Համաձայն հուշագրի 2019 թվականի համար նախատեսվող 10,858 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ) սակագնի աճը տեղափոխվում է 2025 թվական:

2019 թվականի պետական բյուջեով նախատեսված է սուբսիդիա՝ 11,414 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ):

202,272 - 10,858 = 191,414 դրամ/խմ

191,414 - 11,414 = 180,0 դրամ/խմ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ